


“ԹՈՂ ՏՈՒՒՔ ՄԱՆԲ ՏՂՈՑԸ ՈՐ ԻՆՄԻ ԳԱՆ.” ԳՈՒԿ. ԺԸ. 16.

ՀԱՏՈՐ ԺԵ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՕԳՈՍՏՈՍ 1, 1886

ԹԻՒ 8



ՊԵՏԱԿԱՆ ՓԻՂԵՐ

ՊԵՏԱԿԱՆ ՓԻՂԵՐ

Այս փիղերը կը վերաբերին Արևելցի էջիանի մը, և թագաւոր մը կրելու արժանի երևոյթ ունին: Փիղերը մեծագոյնն են բոլոր ցամաքային կենդանեաց, և ասոնք որ կը տեսնուին պատկերին մէջ, ընտրուած են մասնաւորապէս իրենց գերազանց մեծութեան պատճառաւ: Անոնք ծածկուած են ասղնեգործեալ զարդարուն ծածկոյթներով, և անոնց կռնակը դըր-

ուած է գեղեցիկ ձևով մեծածախ համեա մը, որ կը կոչուի «հարա» և որոյ վրայ կը նստին անոնց տրքայական տերերը: Համեաին առջևը կը նստի փղավարը, և ուրիշ ծառայ մը կը քայլ փղին քովէն:

Փիղը յոյժ խելացի կենդանի է և կրթուելով օգտակար ծառայ մը կըրնայ ըլլալ մարդուն: Զօրաւոր փիղ մը օրը 50 մըն երթալով, կրնայ տանիլ

800 օխայ բեռ. և երբեմն կը գործածուին հերկելու և ուրիշ հողագործական աշխատութեանց համար: Բայց երբեմն յոյժ գիւրգրդիւ են, և կը պատմուին շատ դէպքեր որ կը ցուցնեն անոնց վրէժխնդիր օգին: Իրենց ահագին մեծութեան պատճառաւ շատ կերակրոյ կը կարօտին, և ուստի չհաւոր չէ գործածել զանոնք հասարակ գործերու համար: Իրօք հաւանական կը թուի որ փիղն ալ նման

առիւծոյ պիտի ջնջուի քանի մը սե-
րունդ ետքը : Արդէն փղոսկրը , որ
կը շինուի փղին ժանիքներէն և ակ-
ուաներէն , բազմապատիկ աւելի սուղ
է քան որչափ էր քանի մը տարի առաջ :

ՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆԸ ՍԻՐՈՅ ՄԷՋ Ե

«Ո՛հ , ի՞նչ անհուն տարբերութիւն ,»
ըսաւ դեռուահաս բարեկամներէս մին :
«Ի՞նչ կայ ,» հարցուցի :

«Ինչու , ծառայե՛լ ֆրիստոսի : Ա-
մէն բան ակնկալածէս բոլորովին տար-
բեր է :»

«Ի՞նչ կ'ովնկայէիր :»

«Երբ դուք սովոր էիր
խօսել ինձ հետ ֆրիս-
տոսի ծառայելու մա-
սին , կ'ըսէի իւրովի . «Ոչ ,
չեմ կրնար հիմա , քանզի
յայնժամ շատ դժուար
բաներ ընելու եմ , և
բնաւ չեմ կրնար ընել
զանոնք :»

«Ի՞նչ դժուարին բա-
ներ :»

«Ո՛հ , սապէս կը խոր-
հէի , եթէ ճշմարիտ ֆը-
րիստոնեայ ըլլամ , յայն-
ժամ ճիշդ այնպէս քա-
լելու եմ . յեկեղեցի և
աղօթքի ժողովներու եր-
թալու եմ , աղօթելու և
Սուրբ Գիրք կարդալու
եմ : Խորհածէս բոլորու-
վին տարբեր է սակայն :»

«Ինչո՞ւ , Յակոբոս , ի՞նչ
ըսել կ'ուզէք :» Դուք
այժմ կ'երթաք եկեղեցի
և աղօթքի ժողովներուն ,
կը կարդաք Սուրբ Գիրք
և կ'աղօթէք :

«Ո՛հ , այո , բայց հիմա
եւ «իբե՛» ընել զանոնք : Հո՛ս է բոլոր տար-
բերութիւնը : Կը սիրեմ զՅիսուս և
կը սիրեմ ընել ամէն ինչ բան որ նա
կ'ուզէ :»

ՋՐԱՆՑ

Ջրանցն ջուրի ճամբայ է զոր կը
բանան մարդիկ : Մեր փոքրիկ ընթեր-
ցողներէն շատեր լաճ են Սուէզի
ջրանցին վրայ , և կրնան ըսել թէ ո՛ր
ծովերը կը միանան անով :

Պատկերին մէջ ցուցուած ջրանցը
յՄեզդիս է և շատ աւելի նեղ է քան
Սուէզի ջրանցը : Երկաթուղին հնար-
ուելէ առաջ այսպիսի ջրանցը շատ
օգտակար էին : Չի մը նաւակով շատ
աւելի բեռ կրնայ քաշել քան կառ-

քով : Մինչև իսկ հիմա , ուր որ ապ-
րանքը ուշանալով չվաւաստիր և ուր որ
վաճառականը չունի պատճառ աճա-
պարելու , ապրանք յաճախ կը զրկուին
ջրանցից միջոցաւ , քանզի այս կեր-
պով աւելի աժան կ'երթայ քան եր-
կաթուղեաւ : Երեսուն տարի առաջ
ես ճամբորդած եմ ջրանցի նաւակով
մը Ամերիկայի մէկ մասին մէջէն ուր
այն առեն երկաթուղի չկար : Մեք
ճամբորդեցինք գրեթէ այնքան արագ
որքան ջրեպանին ձիերը կը ճամբոր-
դեն ի թուրքիս :

Պատկերը կը ցուցնէ նաև ինչ որ կը

վերին դռնակները կը գոցուին և ստո-
րին դռնակները կը բացուին , այնպէս
որ սահանքին մէջի ջուրը սահանքէն
վար եզող ջուրին հաւասար կ'ըլլայ :
Երբ նաւը կամ նաւեր կը մտնեն սա-
հանքին մէջ , ստորին դուռը կը գոց-
ուի , և վերին դրան փոքրիկ դռնակ-
ները կը բացուին որոց մէջէն ջուրը
կը հոսէ մինչև որ սահանքին մէջի ջու-
րը հասնի սահանքէն վեր եզող ջրոյն
մակերեսին : Յետոյ վերին դռները կը
բացուին և նաւակը կը շարունակէ իւր
ճամբան :



ՎԵՐԻՔԵՐԸ ԼՁՅԸ

Մահաւատ երկաթա-
գործ մը , երբ ֆրիս-
տոնեայ մարդ մը կը մըտ-
նէր խանութը , սովոր
էր հարցունել իւր գոր-
ծաւորներէն միոյն թէ
երբէք լաճ էր այսինչ
եղբոր վրայ և թէ ի՞նչ
ըրած էր նա : Յետոյ կը
սկսէր պատմել թէ ինչ-
պէս այնինչ ֆրիստոն-
եայն սխալներ գործած
էր , և կը յարէր , «Այդ-
ձեր ընտրեալ քրիս-
տոնեայներէն է որոց
վրայ այնքան շատ բան
կը լսենք :»

Օր մը ծեր սարկաւազ-
մը խանութը մտաւ , և
քիչ մը ժամանակ մտիկ
ընելէն ետքը հարցուց ,
«Երբէք կարդացած ես
մեծատան և Ղազարու-
սին առակը :»

«Այո , շատ անգամ ,
ի՞նչ ըսել կ'ուզես :»

Կը յիշէք այն շուները
թէ ինչպէս կու գային և կը լզէին աղ-

քատ Ղազարոսին վէրքերը :


«Այո՛ , բայց ատո՞նք ինչ ըսել կ'ու-
զես :»

«Վաւ ,» ըսաւ սարկաւազը , «դուք
կը յիշեցունէք ինձ այն շուները որք
դու՛ն են միայն լզելով ֆրիստոնէից
վէրքերը :»

Երկաթագործը պապանձեցաւ :

ՎՈՒԼԵՍԻ ԱՐՁԱՆԸ

Այս արձան կը կանգնի խոնարհ
անտառաղարդ լեռան մը գագաթին
վրայ , երկու մղոն հեռի Սկիւտիոյ
Սդէլլին քաղքէն : Այն մարդ , զոր
կը յիշեցունէ այս , Սըր Ռիլլեամ վոլ-



ՋԵՌԱՅՈՐԵ ՋՐԱՆՑ

կոչուի սահանք ջրանցին մէջ : Ջրան-
ցին ջուրը չհոսեր այլ բոլորովին հարթ
հաւասար է , երբ երկրին մակերևոյ-
թին բարձրութիւնը փոխուի յայնժամ
պէտք կ'ըլլայ նաև փոխել ջրանցին
մակերեսը , և այս փոփոխութիւն տեղի
կ'ունենայ սահանքին միջոցաւ : Այս
ջրանցին մէկ մասն է այնչափ երկայն
որ կրնայ ընդունել 2 կամ 3 նաւակ ,
և որոյ երկու ծայրը կան ջրանթա-
փանց կրկին դռնակներ ջրոյ հոսումը
արգելելու համար : Այս դռնակաց մէկ
զոյգը միշտ գոց կը պահուի , քանզի
սահանքէն վեր եզող ջուրը սահանքէն
վար եզող ջուրէն աւելի բարձր է :
Եթէ նաւակ մը դէպ ի վեր երթայ


լէս կ'ապրէր 600 տարի առաջ: Անոր կենաց պատմութիւնը թէև խառնուած է առասպելներով, սակայն գլխաւոր իրողութիւնը ծանօթ են:

Նա գտաւ իւր երկիրը հպատակ Անգղիոյ, որոյ թագաւորը Եղուարդ Ա. էր նշանաւոր պատերազմիկ: 1297 ին վուլէս բարձրացուց ապստամբութեան դրօշը ընդդէմ Անգղիոյ և գրաւեց քանի մը ամրոցներ: Իմանալով որ մեծ Անգղիական բանակ մը կը մօտենայ յարձակել իւր վրայ, քառուեցաւ յՍդէրլին ուր անհեղ ճակատամարտ մը ունեցաւ կատարելապէս ջախջախելով զԱնգղիացիս. և յետոյ ինք արչաւեց Անգղիոյ հիւսիսային մասին վրայ: Հետեւեալ տարին Եղուարդ թագաւորը հաւաքեց ուրիշ մեծ բանակ մը, և ջախջախեց Սկոթլանդացիները մեծ կատորածով: Անկէ ետքը վուլէս շարունակեց պատերազմը քանի մը տարիներ առանց ունենալու ճակատամարտ մը, այլ միշտ յարձակելով Անգղիացոց ջակատներուն վրայ և ջրուելով զանոնք: Եղուարդ թագաւորը վարձք խոստացաւ զայն ձերբակալողին, և վուլէս մատնուեցաւ նոյն իսկ իւր ազնուականներէն միոյն ձեռքով: Տարուեցաւ Անգղիա և իմասդատապարտուեցաւ, և ձիուն պոչը կապած քարչելով տարին դնա կառափնատեղին: Անոր գլուխը ձողի մը ծայրը անցունելով անկեղին Լոնտոնի կամուրջին վրայ, և մարմինը յօշատելով մասերը դրկուեցան այլ և այլ քաղաքներ:

Անոր կեանքը թէև անյաջող թուեցաւ, բայց իւր մահուանէն քանի մը տարի ետքը Սկոթլանդ թագաւորը Բոպերդ Պրուս թօթափեց Անգղիոյ լուծը, և այդ օրէն Սկոթլանդ մնաց անկախ Անգղիայէ մինչև 1607: Յայնժամ Սկոթլանդ թագաւորը ժառանգեց Անգղիոյ գահը իբրև մերձաւորագոյն ազգականը Եղիսաբէթ թագուհւոյն, և յայնմհետէ երկու թագաւորութիւնը միացեալ են:

ԻՆՉՊԷՍ ԸՆՏՐԵՒՈՒ Է ՏՂԱՅ ՄԸ
Պարոն մը լրագրաց միջոցաւ ծանոց թէ սպասաւոր տղու մը պէտք ունէր. և գրեթէ յիսուն անձինք ներկայացան անոր: Ամենուն մէջէն ընտրեց մէկը և արձակեց մնացեալները:
«Կ'ուզէի գիտնալ», ըսաւ բարեկամ մը: «Թէ ինչ պատճառաւ ընտրեցիք այդ տղան որ մէկ յանձնաւորական մը դռնէ չունէր:»
«Կը սխալիք», ըսաւ Պարոնը, «նա չառ յանձնարարականներ ունէր:»
Նա մաքրեց իւր ոտքը երբ ներս մտաւ, և գոցեց դուռը որով ցոյց տուաւ թէ անհոգ չէր: Իւր նստած աթոռը տուաւ անմիջապէս այն կողմէր մարդուն որով ցոյց տուաւ թէ խոհուն էր: Գլխարկը հանեց երբ ներս մտաւ, և փութով պատասխանեց հարցմանց որով ցոյց տուաւ թէ քաղաքավար էր: Վեր առաւ գիրքը գետնէն ուր գրած էի գիտմամբ, և տեղաւորեց զայն սեղանին վրայ. նաև

կենաց ընթացքը: Քաղցրարարոյ, քաղաքավար և խոհեմ տղան է որ կը դռնէ անգղալարար գործ և յաջողութիւն: Եւ յաջողութիւն չնշանակեր հարստութիւն կամ համբաւ: Ճշմարիտ յաջողութիւն կը նշանակէ զարգացում՝ օրինակելի բարուց — բարք մը որ հաւատարիմ է իւր պարտաւորութեանց, հաւատարիմ՝ իւր կոչման, և այնքան անձնուէր որ կրնայ ժամանակ զանել բարեսիրական գործոց ոչ թէ ստիպմամբ, այլ պարզապէս յարտայայտութիւն ջերմ և վեհանձն սկզբանց: Ճշմարիտ յաջողութիւնն է վերջապէս հաւատարմութիւն կենաց ամէն յարաբերութեանց:



ՎՈՒՆՍԻ ԱՐՉՈՆԸ

հանդարտութեամբ սպասեց իւր կարգին փոխանակ ուրիշները հրելով աղմուկ հանելու, որով ցոյց տուաւ թէ պատուաւոր և կանոնաւոր էր: Երբ կը խօսէի անոր հետ դիտելի որ հանդերձները վրձնած և մազերը սանաւրած էր. երբ կը գրէր իւր անունը դիտելի որ եղունգները կտրած և մաքուր էին:

ՍԱՐԹԻՆԱԿ ՍՈՒՐԸԱՆԻԱԿ ՄԸ
Հեռագրի այս դարուն մէջ սուրհանդակի մը խօսքը չըլլար թէև, բայց յիսուն տարի առաջ կար համբաւաւոր սուրհանդակ մը որոյ անունը հռչակուեցաւ բոլոր Եւրոպայի մէջ: Անոր անունն էր Բրնէտը Մէնսըն, և առաջին անգամ ճանչցուեցաւ վաղելով Բարիլէ մինչև Մոսկուա, որ 1760 միտն հեռաւորութեամբ ճամբայ է, երեք օրուան և տասնևութ ժամուան մէջ: 1836 ին վաղեց կալկաթայէ մինչև կոստանդնուպոլիս, անցնելով կեդրոնական Ասիոյ մէջէն, լուր բերելու համար Արևելեան Հնդկական Ընկերութեան կողմէ, Յ, 615 միտն ճամբորդելով յիսուն և ինը օրուան մէջ:

Նա թագաւորաց պատգամաբերն էր, և կ'երթար երկրէ յերկիր տանելով յոյժ կարևոր լուրեր: Բնաւ չէր քալեր այլ միշտ կը վազէր հետեւելով անխտոր լեռներէ, գետերէ և անտառներէ անցնող կտրուկ ճամբուն որ իրեն միայն ծանօթ էր: Քսան և չորս ժամ ուան մէջ երկու անգամ ճաշ կ'ընէր թեթեւ կերպով և կը հանգչէր: Հանգչելու ատեն սովորաբար նեցուկի մը կ'աթման կը ծածկէր երեսը թաշկի նակով և կը քնանար: 1842 ին նա գործածուեցաւ Նեղոսի ալը գտնելու գործին մէջ: Հետեւեալ տարին օր մը մեռած գտնուեցաւ Եգիպտոսի գիւղերէն միոյն մէջ արմատենայ մը կ'աթման և սովորականին պէս ծածկած իւր երեսը:

ՀՕՐ ՄԸ ԶԱՐՄԱՆՔԸ

Տղայ մը շատ երջանիկ կը դգար ուրովհետեւ զմելինի մը տէր եղած էր: Երբ տղայ մը զմելին կ'ունենայ պէտք չէ որ պարսպ մնայ այն և այս զմելինն ալ բաւական տաշեղ կը հանէր, բայց տղան ունէր գլուխ մը այնչափ լաւ որչափ զմելինը: Զմելինին զբուռոր պողպատեայ շեղովը այս տղան միշտ կը ձեւակերպէր փայտի կտոր մը նպատակի մը համար: Նա բնաւ չէր տաշեր տեսնելու համար միայն տաշեղներուն թուշիլը զմելինին բերնէն, և ոչ կարծելու համար գաւազանը կամ սոսկ ժամանակ անցունելու համար: Մինչ կը քանդակէր գաւազանը զմելինով, մտքին մէջ կ'ունենար գազափար մը որուն համեմատ կը տաշէր: Եւ երբ կը տեսնես այսպիսի տղայ մը, կրնաս սպասել որ մեծ մարդ մը պիտի ըլլայ այն քանի մը տարիէն: Օր մը այս տղան ներկայացաւ հօրը, ձեռքը բռնանալով մեքենայի նախատիպ մը (սփռլ), զոր շինած էր զմելինովը: Հայրը ակնարկ մը նետեց անոր վրայ, բայց կարող չեղաւ ըմբռնել մեքենային կազմութեան նպատակը, և բացատրութեան ալ չսպասեց: Տեսաւ միանգամայն որ այս խաղաղիկին վրայ շատ ժամանակ վատնուած և շատ աշխատութիւն թափուած էր: Այս բարկացուց զնա, որովհետեւ յետին ստիճան գործնական մարդ էր և չէր կրնար տեսնել ո և է օգտակարութիւն այսպիսի չնչին գործի մը մէջ: Քաշեց առաւ տղուն ձեռքէն այն աղուոր մեքենան և գետինը նետելով կտոր կտոր ըրաւ զայն: Քիչ մը ետքը հայրը զրկեց իւր տղան երկաթագործութեան արհեստը սորվելու: Տղուն վար-

պետը շուտով հասկցաւ թէ արտասովոր տաղանդի տէր էր նա: Անոր զմելինը դարձեալ սկսաւ գործել: Նոյն նախատիպը դարձեալ շինուեցաւ: Պարծանօք բացատրեց զայն երկաթագործին: Երկաթագործը անմիջապէս ըմբռնեց թէ օգտակար գիււտ էր այն: Առաջին անգամ շինուած անուանոր ոստայնի գործին էր այն: Ուստի ոստայնի գործի մը շինուեցաւ տոկուն նիւթէ որ շատ լաւ կը գործէր: Ոստայնի գործարան մը կառուցուեցաւ և ոստայնանկութեան արհեստը ծաղկեցաւ: Շահուն կէսը տղուն էր: Այս նոր գիւտը փորձելէն մէկ տարի ետքը, երկաթագործը նամակ մը գրեց տղուն հօրը խնայունելով թէ պիտի այցելէր զնա նաև պիտի բերէր իւր հետ այցելու մը, որ հնարած էր հոշակաւոր անուանոր ոստայնի գործին: Ինչ մեծ եղաւ ծեր պարսինի զարմանքը երբ իւր տղան ներկայացուեցաւ իրեն իբրև հնարիչ, և երբ տղան լաւ հօրը թէ զիւտը ուրիշ բան չէր բայց միայն այն նախատիպը զոր ինք ոտքի տակ առնելով կտոր կտոր ըրած էր տարի մը առաջ:

Թող տղայք տաշեն փայտեր ցորչափ կը ջանան մարմնացունել գաղափար մը:

ՀՆԳՈՒՑ ՄԵ՛Կ ԱՌԱՍՊԵՆԸ

Ժամանակաւ հարաւային անտառի մը մէջ կը բնակէր խիստ սուրբ Միւնի (Հնդիկ ճգնաւոր) մը, որ իւր արտասովոր խտակեցութեամբը գրեթէ անսահման իշխանութիւն ստացած էր բնութեան վրայ: Նա էր նաև բարեփրամարդ մը: Օր մը տեսաւ որ ագռաւ մը մկան ձագ մը կը տանէր: Հրամայեց ագռաւին թողուլ զայն, զոր անոյց բերնէն հատիկներով մինչև մեծնալով չափահաս մուկ եղաւ: Օր մը մինչ մուկը կը խաղար՝ անոր քովը կատու մը տեսաւ, և սոսկմամբ վազեց դէպ ի Միւնի սպաստաններու համար անոր բազկաց մէջ:

«Ինեղճ մուկ», ըսաւ Միւնի, «կատու եղիր»: Եւ այնպէս եղաւ, իբրև կատու նա ոչ ևս կը վախնար այլ յաւէտ երկիւղ կ'ազդէր մինչև օր մը եկաւ անոր քով շուն մը: Կատուն սկսաւ դարձեալ վախնալ:

«Ինեղճ կատու», ըսաւ Միւնի, «շուն եղիր»: Եւ այնպէս եղաւ: «Ո՞վ կը վախնայ հիմա», կը խորհէր շունը: Բայց օր մը իւր բոլորափքը մուշող վագր մը տեսնելով, ահաբեկեալ վազեց դէպ ի Միւնի պաշտպանութիւն գտնելու համար:

«Ինեղճ շուն», ըսաւ Միւնի, «վագր եղիր»: Եւ այնպէս եղաւ: Վագրը կը բնակէր Միւնիի հետ, որ կը խորհէր անոր զրայ իբրև փոքրիկ սիրուն մկան վրայ: Զանոնք միատեղ տեսնող մարդիկ կ'ըսէին, «Ա՛հ, ահա սուրբ մը և վագր մը որ երբեմն փոքրիկ կատու էր»: Ասոր վրայ վագրը սկսաւ սապէս մտածել. «Յորչափ Միւնի կ'ապրի ամէն մարդ պիտի գիտնայ թէ ես սրբախ ստորին վիճակէ բարձրացած եմ. ուստի պէտք է ազատիմ անկէ»: Բայց Միւնի տեսնելով որ վագրը կը պատրաստուի իւր վրայ յարձակելու, ըսաւ, «Անդամ վագր, մուկ եղիր դարձեալ»: Եւ այնպէս եղաւ. փչյ մը ետքը թռչուն մը կոցելով տարաւ զայն որ այլ ևս չգարձաւ:

Բարոյական. Ստորին անձ մը պէտք չէ բարձրանայ:

ՏԱՐՈՐԻՆԱԿ ԶԿՆՈՐՈՒԹԻՒՆ

Զմեռ ատեն, երբ շուրբը կը սառնի, Ամերիկացի ձկնորսք Միչիկան լճին մէջ Սակինոյի ժողին վրայ ձուկ բռնելու տարօրինակ եղանակ մ'ունին: Սառնի վրայ տեղ մը կը տեսնես գիւղ մը հարիւրի չափ խրճիթներէ բաղկացեալ, որք հաստատուած են գլաններու կամ անիւներու վրայ: Գրեթէ 500 անձինք կը բնակին այս խրճիթներուն մէջ, և երբ ձկնորսութեան յարմար ժամանակը գայ՝ այս շարժական տունները կը տանին սառնի վրայ ուր և կամին, և իւրաքանչիւր խրճիթին կեդրոնէն կը բանան ծակ մը որով կը հասնին ջրային: Յետոյ թեղի մը ծայրը անցուած պղտիկ ձուկին մը կը կախեն այս ծակէն: Քայսժամ մեծ ձուկ մը կը հետեի կախուած այս փոքրիկ ձկան մինչև ծակին բերանը՝ կեր մը գտնելու յուսով. բայց ձկնորսք սպասելով ծակին բերանը՝ կեր փնտտելու համար եկող այն խեղճ ձուկը երկայրի նիզակով կամ ճանկով մը կը բռնեն, և այս կերպով մէկ օրուան մէջ երբեմն մինչև 200 թանկացին ձուկ կրնան բռնել միայն մէկ խրճիթին մէջ: Գիշեր ատեն ձուկերը այս ձկնորսներուն վառած ջահերուն լոյսին կու գան, դիւթի տեսարան մ'է այս ուր կը դիմեն ձկնորս առանց խայծի: Երբ մէկ տեղոյն ձուկը նուազի, անիւներու վրայ հաստատուած այս շարժական խրճիթը կը տարուի ուրիշ տեղ մը:

Ամերիկայի Մեխիկոսկոյ ընկերութեան հրատարակած

Իմբագիր

Փոխ-Իմբագիր

Յիմնաւոր իմբագրու

ԿՈՍՏԱՆԴՆՈՒԹՅԱՆ

Ի ՏԳՐԱԲՆ Ա. ՅԱՊԻՆ ԿՈՍՏԱՆԵ